



ՆՊԱՏԱԿԸ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ներքին աուդիտի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) ներքին աուդիտի առաքելությունը, լիազորությունները, պարտականությունները, աուդիտի շրջանակը և պատասխանատվությունը:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն կանոնադրությունը կիրառվում է Ներքին աուդիտի, Բանկի կառավարման մարմինների, խորհրդին կից Աուդիտի հանձնաժողովի, ինչպես նաև շահագրգիռ այլ ստորաբաժանումների աշխատակիցների կողմից:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի ղեկավարություն՝ Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալներ:

Աուդիտի հանձնաժողով՝ Բանկի խորհրդին կից Աուդիտի հանձնաժողով:

ԳԼՈՒԽ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

1.1. Բանկի Ներքին աուդիտի առաքելությունն է հավաստել, որ Բանկի գործառնություններն իրականացվում են լավագույն փորձի և բարձր չափանիշների համաձայն՝ տրամադրելով անկախ, անաչառ հավաստիացում և խորհրդատվություն:

1.2. Որպես Բանկի հսկողության երրորդ մակարդակ՝ Ներքին աուդիտը գլխավորապես հավաստիացում է տրամադրում հսկողության առաջին և երկրորդ մակարդակների կողմից իրականացվող գործունեության արդյունավետության և պատշաճության վերաբերյալ:

1.3. Ներքին աուդիտն օգնում է Բանկին հասնելու իր նպատակներին՝ գնահատելու և բարելավելու ռիսկերի կառավարման, հսկողության և կորպորատիվ կառավարման համակարգերի և գործընթացների արդյունավետությունը և գործելով որպես ռազմավարական խորհրդատու՝ սատարում է շարունակական զարգացումը: Ներքին աուդիտի նպատակն է՝ սատարել ռիսկերի կառավարման արդյունաբեր, արդյունավետ և ճկուն գործելակերպը:

ԳԼՈՒԽ 2. ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱԶԱՌՈՒԹՅՈՒՆ

2.1. Անկախություն երաշխավորելու համար, Ներքին աուդիտի ղեկավարը ֆունկցիոնալ առումով հաշվետու է Աուդիտի հանձնաժողովի նախագահին, իսկ ադմինիստրատիվ առումով՝ Բանկի գլխավոր գործադիր տնօրենին:

2.2. Ներքին աուդիտի ղեկավարը սահմանում է ներքին աուդիտորների խնդիրները և տարեկան կտրվածքով գնահատում է նրանց կատարողականը՝ Բանկի քաղաքականություններին համապատասխան:

2.3. Ներքին աուդիտի ղեկավարի և Ներքին աուդիտի անձնակազմի նշանակմանը, ազատմանը և վարձատրությանը վերաբերող որոշումները նախահաստատվում են Աուդիտի հանձնաժողովի կողմից և հաստատվում խորհրդի կողմից:

2.4. Անաչառություն պահպանելու համար Ներքին աուդիտը չունի գործառնական պատասխանատվություն կամ իրավասություն աուդիտի ենթարկված որևէ գործառնության նկատմամբ: Յուրաքանչյուր բիզնես միավոր պատասխանատու է իր կողմից իրականացվող գործառնությունների համար, ներառյալ՝ ներքին հսկողությունը: Նախ և առաջ երաշխավորվում է, որ Ներքին աուդիտի գործառնությունը կաշկանդված չէ հետևելու Բանկի ղեկավարության կամ որևէ այլ աշխատողի կողմից տրված հրահանգներին՝ աուդիտի արդյունքների գնահատման, հաշվետվություններ պատրաստելու կամ աուդիտի իրականաց-



մասն առնչվող որևէ գործունեության ընթացքում:

ԳԼՈՒԽ 3. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Իր պարտականությունները կատարելիս Ներքին աուդիտը լիազորված է ունենալ հասանելիություն Բանկի ամբողջ տեղեկատվությանը, ֆիզիկական գույքին, ՏՏ համակարգերին և անձնակազմին և մասնակցել ցանկացած նիստի՝ որպես դիտորդ:

ԳԼՈՒԽ 4. ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԹԻԿԱ

4.1. Ներքին աուդիտորները պետք է ցուցաբերեն ազնվության բարձրագույն մակարդակ, որն անհրաժեշտ է վստահության ձևավորման համար, ինչն էլ նրանց մասնագիտական դատողություններին վստահելու հիմքը կհանդիսանա:

4.2. Ներքին աուդիտորներից նաև ակնկալվում է հանդես գալ որպես Բանկի արժեքներին և վարվելակերպի կանոններին համապատասխանող օրինակելի կերպար: Ներքին աուդիտորները պետք է ենթարկվեն Ներքին աուդիտորների ինստիտուտի կողմից սահմանված էթիկայի կանոններին:

ԳԼՈՒԽ 5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

5.1. Ներքին աուդիտորները պետք է հարգեն աուդիտի իրականացման ընթացքում ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը և որևէ տեղեկատվություն չպետք է հայտնեն երրորդ անձանց՝ առանց հատուկ լիազորության կամ օրենսդրական/մասնագիտական պահանջի:

5.2. Ներքին աուդիտորները.

1) պետք է զգուշավոր լինեն իրենց պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության օգտագործման և պահպանման հարցում,

2) չպետք է օգտագործեն իրենց հայտնի դարձած տեղեկատվությունը որևէ անձնական օգուտի համար կամ որևէ այլ ձևով, որը կընկալվի կամ կարող է ընկալվել որպես վնասաբեր Բանկի օրինական և էթիկական նպատակների համար:

5.3. Ներքին աուդիտի հաշվետվությունները և պաշտոնական կարծիքներն ունեն սահմանափակ հասանելիություն կամ գաղտնի են համաձայն Բանկում ընդունված գաղտնիության աստիճանի: Ներքին աուդիտի հաշվետվությունները ոչ ամբողջապես, և ոչ էլ մասնակի չպետք է հաջորդիվ տարածվեն որևէ ստացողի կողմից առանց Ներքին աուդիտի ղեկավարի նախնական գրավոր համաձայնության:

ԳԼՈՒԽ 6. ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Բանկի բոլոր գործառնությունները, ներառյալ՝ պատվիրակված գործառնությունները, մտնում են Ներքին աուդիտի ընդհանուր շրջանակի մեջ:

6.2. Իր պարտականությունները կատարելու համար Ներքին աուդիտը.

1) ճանաչում և գնահատում է Բանկի գործառնությունների պոտենցիալ ռիսկերը,

2) ստուգում է սահմանված հսկողության մեխանիզմների համարժեքությունը՝ երաշխավորելու դրանց համապատասխանությունը քաղաքականություններին և գործընթացներին և համընկնումը Բանկի ռիսկերի ռազմավարության հետ,

3) գնահատում է ֆինանսական և գործառնական տեղեկատվության հուսալիությունը և ամբողջականությունը,

4) գնահատում է ակտիվների պահպանման միջոցները,

5) գնահատում է գործառնությունների արդյունավետությունը և արդյունավորությունը,

6) ժամանակին և անաչառորեն տեղեկացնում է Բանկի ղեկավարությանը, Աուդիտի հանձնաժողովին և Խորհրդին աուդիտի բացահայտումների մասին՝ համաձայն Բանկի՝ Ներքին աուդիտի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերում սահմանված կանոնների,

7) հետստուգում է առաջարկությունների կատարումը՝ համոզվելու համար, որ տարվել են արդյունավետ ուղղիչ աշխատանքներ՝ չնայած, որ ուղղիչ աշխատանքների ժամանակին իրականացման վերջնական պատասխանատվությունը դրված է Բանկի ղեկավարության վրա,

8) իրականացնում է պլանավորված և, անհրաժեշտության դեպքում, նաև չպլանավորված աուդիտներ: Չպլանավորված աուդիտներն ընդգրկում են պրոյեկտների աուդիտները, հատուկ պահանջով աուդիտները կամ հատուկ հետազոտությունները: Պրոյեկտների գծով չպլանավորված աուդիտն ուղղված է պրոյեկտի կոնկրետ փուլում առաջարկություններ ներկայացնելուն: Հատուկ պահանջով աուդիտը և հատուկ հետազոտությունը Բանկի ղեկավարության կամ Աուդիտի հանձնաժողովի պահանջով իրականացվող, շտապ, չպլանավորված աուդիտները կամ ներքին ադմինիստրատիվ հետազոտություններն են: Բոլոր չպլանավորված աուդիտները պետք է նախահաստատվեն Աուդիտի հանձնաժողովի կողմից, իսկ աուդիտն իրականացնելուց հետո դրանց մասին պետք է տեղեկացվի Խորհրդին,

9) իրականացնում է պաշտոնական խորհրդատվական աուդիտներ: Սրանք տարեկան աուդիտի պլանի մաս են՝ համաձայնեցված Բանկի ղեկավարության հետ և նախատեսված են Բանկի կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության բարելավման համար,

10) համաձայնեցված է գործում արտաքին աուդիտորական կազմակերպության և Բանկում այլ հսկողական գործառույթներ իրականացնող անձանց/ստորաբաժանումների հետ՝ պատշաճ ծածկույթ ապահովելու և աշխատանքների կրկնությունից խուսափելու նպատակով:

6.3. Անհրաժեշտության դեպքում Ներքին աուդիտը կարող է որոշ աուդիտներ ամբողջովին կամ մասնակի պատվիրակել արտաքին փորձագետների: Նման դեպքերում, այդ աուդիտների պատասխանատվությունը մնում է Ներքին աուդիտի վրա:

6.4. Բացառիկ դեպքերում, Ներքին աուդիտը կարող է Բանկի գլխավոր գործադիր տնօրենի պահանջով հավաստիացման ծառայություններ մատուցել Բանկից դուրս գործող կողմերին:

ԳԼՈՒԽ 7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1. Ներքին աուդիտն իր տեսակետն է հայտնում Բանկի ռիսկերի ռազմավարության սահմանման պարբերական գործընթացում:

7.2. Ներքին աուդիտը կազմում է տարեկան աուդիտի պլան: Տարեկան աուդիտի պլանն ուղղված է գործարար և գործառնական գործընթացներին, հիմնված է ռիսկերի վրա, հաշվի է առնում Բանկի ռազմավարությունը ու դրա առանցքային նպատակները և մշակվում է Խորհրդի, Բանկի ղեկավարության, Աուդիտի հանձնաժողովի և ներքին աուդիտին կարծիք տրամադրելու համար կարևոր այլ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելով: Ավելին, Բանկի բոլոր գործառնությունները ենթակա են աուդիտի այնպիսի հաճախականությամբ, որը որոշվում է գործառնության ռիսկի գնահատականով (աուդիտի ցիկլ):

7.3. Տարեկան աուդիտի պլանը տրամադրում է տեղեկատվություն աուդիտի պլանավորված աշխատանքների մասին: Տարեկան աուդիտի պլանի նախագիծը, ներառյալ՝ հաջորդ տարվա նախնական հեռանկարը, ներկայացվում է Բանկի ղեկավարությանը՝ կարծիքի, տրվում է Աուդիտի հանձնաժողովին դիտարկման և նախահաստատման, և հաջորդիվ ներկայացվում է Խորհրդի հաստատմանը: Անհրաժեշտության դեպքում, տարվա ընթացքում պլանում կարող են կատարվել փոփոխություններ: Նշանակալի փոփոխությունները ներկայացվում են Բանկի ղեկավարությանը՝ կարծիքի, հաջորդիվ Աուդիտի հանձնաժողովին՝ նախահաստատման, որից հետո ներկայացվում են Խորհրդի հաստատմանը:

7.4. Ներքին աուդիտը պատասխանատու է աուդիտների պլանավորման, տարեկան աուդիտի պլանում ներառված աուդիտների իրականացման, հաշվետվությունների ներկայացման և հետստուգման համար և որոշում է աուդիտների նպատակները, շրջանակները և ժամանակացույցը:

7.5. Աուդիտը տեղում իրականացվում է ժամանակին և պրոֆեսիոնալ ձևով: Աուդիտի արդյունքների ներկայացումը ներառում է բաց գործընթաց՝ ուղղված փաստերի և աուդիտի դիտարկումների հավաստիության շուրջ համաձայնության գալուն: Բոլոր դեպքերում, հետստուգման աշխատանքներ են

իրականացվում աուդիտի դիտարկումներին համարժեք արձագանք երաշխավորելու համար: Ներքին աուդիտը հետստուգման արդյունքները ներկայացնում է Բանկի ղեկավարությանը, Աուդիտի հանձնաժողովին և Խորհրդին:

7.6. Աուդիտները պետք է իրականացվեն հմտորեն, մասնագիտական պատշաճ ուշադրությամբ:

7.7. Ներքին աուդիտը ներկայացնում է տարեկան հաշվետվություն Բանկի ղեկավարությանը՝ կարծիքի, ապա Աուդիտի հանձնաժողովին՝ նախահաստատման, որից հետո ներկայացնում է Խորհրդի հաստատմանը:

ԳԼՈՒԽ 8. ՈՐԱԿԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

8.1. Ներքին աուդիտը պետք է մշակի, ներդնի և պահպանի որակի հավաստիացման և բարելավման ծրագիր, որը կներառի Ներքին աուդիտի գործունեության բոլոր ոլորտները: Ծրագիրը պետք է ներառի Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին Ներքին աուդիտի գործունեության համապատասխանության շարունակական, պարբերական ներքին և արտաքին գնահատումներ, ինչպես նաև ներքին աուդիտորների կողմից Ներքին աուդիտորների ինստիտուտի էթիկայի կանոնների կիրառման գնահատում: Ծրագիրը պետք է նաև գնահատի Ներքին աուդիտի արդյունավորությունը և արդյունավետությունը և բացահայտի բարելավման հնարավորությունները:

8.2. Ներքին աուդիտի ղեկավարը ծրագրի արդյունքները ներկայացնում է Բանկի ղեկավարությանը, Աուդիտի հանձնաժողովին և Խորհրդին:

ԳԼՈՒԽ 9. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

9.1. Ներքին աուդիտը նպատակ ունի հավատարիմ լինել առաջատար մասնագիտական փորձի ստանդարտներին, ինչպիսին են Ներքին աուդիտորների ինստիտուտի կողմից հրապարակվածները: Ներքին աուդիտորների ինստիտուտի կողմից առաջ քաշված Ներքին աուդիտի սահմանումը, էթիկայի կանոնները և Միջազգային ստանդարտները ճանաչվում են որպես պարտադիր իրենց էությամբ:

ԳԼՈՒԽ 10. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն կանոնադրությունը պետք է վերանայվի առնվազն տարին մեկ անգամ:

10.2. Կանոնադրությունը և դրա որևէ փոփոխություն կամ թարմացում հաստատվում է Խորհրդի կողմից՝ Աուդիտի հանձնաժողովի նախահաստատումից հետո:

10.3. Ներքին աուդիտի ղեկավարը, Աուդիտի հանձնաժողովի նախագահի հետ խորհրդակցելով, իրավասու է հրապարակել սույն կանոնադրության պահանջներին համապատասխանող առավել մանրամասնեցված քաղաքականություններ, ընթացակարգեր և ուղեցույցներ՝ Բանկի ներքին կանոններին վերջիններիս համապատասխանության իրավական փորձաքննությունից հետո: